ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ծաղկաձոր համայնքի 2025թ. բյուջեի հաստատման որոշման նախագիծը մշակվել է առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1 մասի 5 կետի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 32 հոդվածի, 33 հոդվածի 3 մասի պահանջների համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրավորումներն իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Բյուջեն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Ծաղկաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծում եկամուտների գումարը ծրագրվել է 1 089 000,0 հազար դրամ, ծախսերի գումարը՝ 3 789 000,0 հազար դրամ, դիֆիցիտը / պակասուրդը/՝ 2 700 000.0 հազար դրամ:

Բյուջեի եկամուտների կանխատեսում

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 938887,8 հազար դրամ: Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման դեպքում:

Մասնավորապես.

1. Հարկեր և տուրքեր.

1.1Հարկային եկամուտները ծրագրվել են 595 600.0 հազար դրամի չափով:

Հարկային եկամուտների կանխատեսվող աճը պայմանավորված է Հայկային օրենսգրքով սահմանված անշարժ գույքի հարկի հաշվարկման կարգով և համայնքում նոր գրանցվող փոխադրամիջոցների հարկից:

1.2Տեղական տուրքերը ծրագրվել են 87 887,0 հազար դրամի չափով: Այն պայմանավորված է համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար , համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար, հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար, բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար, համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար, արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների

խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար նախատեսված տուրքերից:

2. Պետական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախագծով ծրագրվել է 64458,6 հազար դրամ, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ)՝ 653,6 հազար դրամ, կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 85000,0 հազար դրամ:

3. Այլ եկամուտներ.

2025 թվականի ծրագրով այլ եկամուտները նախատեսվել են 197 400,8 հազար դրամ: Այլ եկամուտները իրենց մեջ ներառում են հողի և գույքի վարձակալությունից եկամուտները, վարչական գանձումները, ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհները, մուտքեր տույժերից և տուգանքներից:

2.Բյուջեի ծախսերի կանխատեսում

2.1Ծաղկաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել 3 789 000,0 հազար դրամի չափով:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերում՝

2.1.1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտին հատկացվել է 600771,1 հազար դրամ,

2.1.2 Պաշտպանություն և հասարակական կարգ անվտանգություն և դատական գործունեության ոլորտներին հատկացվել է 4546,5 հազ դրամ,

2.1.3 Տնտեսական հարաբերություններ ոլորտին հատկացվել է 686778,3 հազար դրամ,

2.1.4 Շրջակա միջավայրի պաշտպանություն ոլորտին հատկացվել է 621549,3 հազարդրամ,

2.1.5 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության ոլորտին հատկացվել է 817602,1 հազար դրամ:

2.1.6 Հանգիստ , մշակույթ և կրոն ոլորտին հատկացվել է 603680.1 հազար դրամ:

2.1.7 Կրթության ոլորտին հատկացվել է 202015,1 հազար դրամ:

2.1.9 Սոցիալական ապաշտպանություն ոլորտին հատկացվել է 11 700.0 հազար դրամ,

2.1.10 Պահուստային ֆոնդ 240357,5 հազար դրամ:

2.2 Ստորև ներկայացվում են համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի:

- Ծաղկաձոր համայնքի Հանքավան բնակավայրի 3-րդ փողոց 1-ին և 3-րդ նրբանցքների, Մարմարիկ բնակավայրի 2-րդ, 3-րդ փողոց 2 նրբ., 5-րդ, 6-րդ փողոցների հիմնանորոգման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ,
- Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի 2-րդ, 3-րդ , 6-րդ, 7-րդ, 8-րդ փողոցների շարունակելի հատվածների և 10-րդ փողոցի հիմնանորոգման աշխատանքներ,

- Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Խ.Կեչառեցու փողոցի հիմնանորոգման և մայթերի բնական բազալտե քարով կառուցման աշխատանքներ,
- « Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Ե.Չարենցի, Ավ.Իսահակյան փողոցների և Ավ.Իսահակյան փակուղու հիմնանորոգման և մայթերի բնական բազալտե քարով կառուցման աշխատանքներ,
- « Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Օլիմպիական, Վ.Հարությունյան, Մ.Մկրտչյան և Ե.Չարենցի (Ծաղկունյաց հրապարակից մինչև Մ.Մկրտչյան փողոց հատված) մայթերի բնական բազալտե քարով կառուցման աշխատանքներ,
- Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքում զբոսայգու կառուցման աշխատանքներ,
- Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի կոյուղու կառուցման աշխատանքներ,
- Ծաղկաձոր համայնքի Արտավազ-Փյունիկ բնակավայրի արտաքին լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքներ,
- Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներ,
- Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներ,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ